ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ

ՊՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ

M. BENIARD
Poste Restante
Athènes (Grèce)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար

Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։



ԲԵԹՄՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 ֆրանկ.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա՛ ազատութեան ճանապարհը։

Ժողովո՛ւրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԱԹԷՆՔ | Nr 6 ՕԳՈՍՏՈՍ Nr 6 | 1894 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ՄԷԿ—ԵՐԿՈՒ ՀԱՐՈՒԱԾ ԵՒ ՆԱ ԿԱՆՇՆՉԱՆԱՅ։

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատութիւն — վսեմ խօսք, բայց որքա՜ն ըստէպ այդ խօսքի տակ զանազան անհատներ ծածկում են իրանց ստորաքարշ դիտումները. որքա՜ն ստէպ դիմակի տեղ է նա ծառայում քաղաքական բաղդախնդիրների համար։

Ազատութիւն դիցուհին պատմութեան մէջ միշտ ունեցել է անկեղծ սիրահարներ, սակայն եղել են նաև անհատներ, որոնք այդ անարատ դիցուհուն պոռնիկ կնկայ տեղ դնելով, անպատուել են նրան։ Եւ չքնաղ դիցուհուն դարձնելով պոռնիկ, այդ անհատներն իրանք հանդիսացել են պոռնկապահներ։ Նրանք ծախում են նրան և ձեռք բերած դրամով պահպանում իրանց չարաբաստիկ գոյութիւնը։ Բայց շտապենք աւելացնել. այդ ծախելը երբէք չէ եղել իրական, այլ միշտ գտնվել է երեւակայական պայմաններում, որովհետեւ ժողովուրդը, որ դիցուհու սիրահարն է, միամտաբար, տըխմարաբար խաբվում է ճարպիկ վաճառողից, որն իսկապէս չունի և չէ կարող ունենալ ոչ մէկ իրաւունք դիցուհու վրայ։

Ազատութիւն դիցուհու պատիւն այդ խորամանկ վաճառքին տրվելը երեւակայական է, որովհետեւ նրա պատիւը երբէք չէ կարող վաճառքի դրվել։ Բայց բաւական չէ, որ վաճառողները միշտ ջանք են արել անմահ դիցուհուն իրանց կեղտոտ շուկայի ապրանքը դարձնել. նրանք խաբեբայութեամբ ու կեղծաւորութեամբ ճգնել են միշտ դիցուհու մեծութեան, նրա գեղեցկութեան, նրա վսեմութեան փայլի ու պայծառութեան հովանիի տակ անցնել և իրանց դիւական անբարոյականութիւնն այդ պայծառութեան ճառագայթների լուսով սքօղել և ապա՝ իբրեւ պսակ՝ փաթաթել իրանց անամօթ ճակատին դիցուհու փառքի ծիածանագոյն ժապաւէնը։

Պատմութեան ընթացքում, ամեն ազգերի մէջ ամեն քաղաքական կուսակցութիւն կամ անհատ միշտ Ազատութեան անունն է տվել և իրան ներկայացրել նրա միակ պաշտպան։ Ժողովուրդն, ինչպէս ոչխարների հօտը, շատ անգամ խաբվել է, հետեւելով այս կամ այն կուսակցութեան, այս կամ այն անհատին։

Երեւան է գալիս մի քաղաքական կուսակցութիւն, որ կատաղի պաշտպան է բացարձակ միապետութեան, — նա իրան հռչակում է Ազատութեան միակ շտեմարան, նա խօսում է միշտ Ազատութեան անունով։ Երեւան է գալիս մէկ ուրիշ քաղաքական կուսակցութիւն, որ սահմանադրական միապետութեան ջատագով է — նա էլ, իր նպատակների համար, Ազատութեան խօսքն է շահագործում։ Երեւան է գալիս մի երրորդ, այս մէկն, ասենք, նախկին երկուսից աւելի առաջադէմ ու ազատամիտ, կուսակցութիւն և դարձեալ միեւնոյն երգն է երգում։ Վերջապէս, երեւան են գալիս ուրիշ կուսակցութիւններ, որոնց խիղճն անբովանդակ եւ միտքը՝ դատարկ լինելով, արդէն ոչինչ ուղղութիւն չունեն. շահախնդիրներ՝ նրանք գնդակի պէս գլորվում են միշտ դէպի յաղթանակող կուսակցութիւնը, խառնվում նրա հետ, — դրանք էլ կարծես իրանց սրբազան պարտքն են համարում պոռալ Ազատութիւն՝ առանց իմաստի։

Այդ բոլորի մէջ ուշագրաւն այն հանգամանքն է, որ ժողովուրդն, ուրեմն, միշտ սիրահար է եղել Ազատութեան, և ամեն քաղաքական կուսակցութիւն, իր կողմը գրաւելու համար ընդհանրութեանը, գտնվել է այն անհրաժեշտութեան մէջ, որ միշտ դրան խոստացել է տալ սիրած դիցուհուն։

Բայց իսկապէս որքա՜ն տարբերութիւն նոյն այդ Ազատութիւն խօսքի ի մ ա ս տ ո ւ մ, երբ այդ խօսքն արտասանողն այլ և այլ կուսակցութեան պատկանող անհատներին։ Ազատութիւն միապետի իր միահեծան իշխանութեամբ ժողովրդին ճնշելու — թարգմանութիւնն է Ազատութեան խօսքի, երբ նրան արտասանողը բացարձակ միապետականի շրթներն են։ Ազատութիւն միապետի, նրա շրջապատող առանձնաշնորհվածների, վերին դասակարգերի — այդ է սահմանադրական միապետականի Ազատութիւն ասած խօսքի միտքը։ Բուրժուա հանրապետականը կամ առհասարակ ազատամիտն Ազատութիւնը հասկանում է միմիայն իր, ունեւոր, դասակարգի համար և յայտնի քաղաքական իրաւունքներ ժողովրդի համար։ Ներկայ ժամանակներումս ճշմարիտ Ազատութեան արդէն ճիշդ, ամենաընդարձակ ու առաջադէմ գաղափարը պատկանում է սօցիալիստներին և այդ գաղափարն առաջացած է ժամանակակից կեանքի պայմաններից։ Իսկ Ազատութիւն խօսքն ինչ է նշանակում ուղղութիւն չունեցողների բերանում — այդ էլ մենք թողնում ենք, որ իրանք ասեն։

Չունե՞նք արդեօք հայերիս մէջ այդպիսի, մէկն աւելի և միւսը նուազ որոշված, քաղաքական կուսակցութիւնների բաժանումներ։ Այո՛, ունենք և նա մանաւանդ վերջին, ոչ մէկ ուղղութիւն չունեցող կուսակցութիւններ։

Եւ թո՛ղ ժողովուրդը զգոյշ լինի և կոյր հօտ չը դառնայ։ Թո՛ղ նա պահանջէ մեր քաղաքական կուսակցութիւններից ու անհատներից Ազատութիւն խօսքի իմաստի բացատրութիւնն ու հասկացողութիւնը և չը խաբվէ նրանց Փրազ-

ՇԻՐԻՆ ԱԼԻ

ԵՒ ԻՐ ՍՊԱՆՈՂԸ *)

Յեղափոխական կեանքից.

Կոպետը նշմարեց փախստական աւազակներից մէկին. նրա գնդակը մտաւ փախչողի մէջքը եւ դուրս պրծնելով կրծքից, գետինը փռեց նրան.... Մնացածները թողնելով իրանց պետի եւ ընկերի դիակներն, անհետացան։ Կառավարութիւնն իմանալով եղելութիւնը, անմիջապէս գրաւեց աւազակների զէնքերը և երկու սպանվածների դիակները գիւղական փայտէ սահնակների վրայ բեռցած՝ հեռացրեց գիւղից։

Լեռնային թիւրք, լազ, չէրքէզ, աւազակների բոյնը պէտք է փնտռել նոյն իսկ թիւրք կառավարութեան շրջանակում։ Այդ պետական աւազակներն իրանց հաշւով զինելով վայրագ հերոսներին, ուղարկում են նրանց այս ու այն կողմ եւ ամեն աննպաստ ու վտանգաւոր հանգամանքներում՝ օգնում են նրանց, ազատում բանտից, շղթաներից եւ նորից ուղարկում իրանց արհեստի ետեւից։ Շիրին-Ալին ունէր իր թեկնածուն Բին-Բաշին էլ նրա հզօր պաշտպանն էր։ Լսելով իր հերոսի մահը եւ իր լեռնային եկամուտների դադարումը, նա սկսաւ ոխակալ սրտով ծածուկ կերպով շարունակ հետեւել Մինասին։

***

1890 յուլիս 15-ի Գում-Գափուի ցոյցը սարսել էր ամբողջ թիւրք կառավարութեան հիմը։ Նրա աչքին այլ եւս հայը հին ստրուկ հպատակը չէր. նա նշմարել էր նրա ներքին կեանքում մի ինքնաճանաչութիւն. նա տեսնում էր այդ անարգ "գեաւուրին„ որ յանդգնում էր կամաց-կամաց խոյս տալ բռնապետութեան ճնշող ձեռքից։ Նրա համար „Գեաւուրը" դարձել էր մէկ ամենաոխերիմ թշնամի. պէտք էր ուրեմն ոչնչացնել նրան։

Կ. Պօլսի կենտրոնական կառավարութիւնը գաղտնի հրահանգ էր ուղարկել գաւառական վարչութիւններին, որ ամեն կերպ անբարոյական միջոցներ ձեռք առնեն՝ հայ տարրը ոչնչացնելու համար։ Ոստիկան զինւորների թիւը բազմապատկել էին։ Նօթի պաշտօնեաները բաց էին արել տուրքի հին տոմարները եւ ամեն կերպով խարդախել էին նրանց, պարտական էին հանել գիւղացիներից շատերին, շինել էին ապառիկ տուրքերի երկար ցուցակներ եւ յանձնել էին ոստիկան զինւորներին. բացարձակ հրաման էին տվել, որ չը խնայեն ոչ ոքին, եւ ամեն մի փոքր տրտունջ գիւղացիների կողմից պէտք է նկատվէր իբր քաղաքական մի շարժում։ Պագըեէի (մնացորդ տուրք) գանձման տագնապը տիրում էր նաև Գափու-Գաեառում։ Ոստիկանապետը վեց ոստիկան զինւորների հետ մտել էր գիւղը եւ ամեն բան տակն ու վրայ արել։ Սոսկալի էին նրա արարքները։ Ահա մօտակայ ծառի ճիւղերից կախած էին մի տղամարդ, որ բոլորովին մերկացրել էին. նա աղաչում էր, բայց ոչ ոք չէր լսում։ Մէկ ուրիշ կողմ մի քանիսին մէջք-մէջքի կապկպելով, գլորել էին աղբի դէզերի վրայ։ Գիւղում մնացած տղամարդ, կին, ամենքը խոյս էին տվել անտառների խորքերը։ Տների դռները բաց էին գտել ժանդարմները, ներս էին խուժել և կողոպտել, աւերել։ Գոմէշների, եզների եւ կովերի բազմութիւն, իրանց վրայ կրելով գիւղացիների ամբողջ կահ կարասին, սպասում էին քաղաքի ճանապարհի վրայ։ Գիւղացիները հեռուից տեսնելով իրանց սպառնացող ապագայի անխուսափելի թշուառութիւնը, կատաղեցան։ Նրանք նշմարեցին աւազակ սուլթանի ստորադաս պաշտօնեաներին, որ կողոպտելով ամբողջ գեղը, հեռանում էին։ Նրանք զինվեցան ամեն բանով, ինչ որ ձեռքի տակ ընկաւ եւ կատաղած սկսան դիմել դէպի կիրճը։ Ոստիկանները տեսնելով իրանց ետեւից վազող խուժանին, թողին ամեն ինչ և սկսան փախչել։ Նրանք գիւղացիների այդ ընթացքին տվին քաղաքական գոյն։ Գափու-Գաեան ապստամբ հռչակվեցաւ

***

Աշնան լրացած լուսինը իր լեցուն լոյսով թափանցում էր մինչեւ անտառների ամենամութ խորքերը։ Մօտակայ ձորակի գլխում լսվում էր փոքրիկ վտակի միօրինակ շփշփոցը, որը վայր էր նետվում ահագին բարձր ժայռերից եւ բնական ցնցուղ էր կազմում։ Երեսուն զինված կանոնաւոր զօրքեր ձիավարում էին արագ դէպի զառիվերը։ Նրանք փաթաթված էին իրանց զինւորական կապօտներում։ Ցուրտ քամին կծում էր նրանց դէմքերը։ Լուսադէմին նրանք հասան Շիրին Ալիի ընկած տեղը։ Բին-Բաշին խորը հառաչեց և Մուհամմէտի անունը տալով, նզովեց նրա սպանողին։ Նրանք անցան նեղ կիրճից։ Գափու-Գաեան ննջում էր իր ամենաքաղցր քնով առանց մտածելու, թէ ինչ վտանգ էր սպասում

*) Տես „Ապտակ" Nrs. 3, 4 և 5

ներից, պատասխանատուութիւններից, ջեղուխտութիւնից, սրա-նրա դէմ հաջելուց։

Հայ ժողովուրդն ուզում է Ազատութիւն դիցուհուն և ոչ պոռնիկ կին։ Նրանք, որոնք ճըգնում են անպատւել այդ դիցուհուն և վաճառքի են հանում, քաղաքական գործիչ չեն և ոչ հայրենասէր, և ոչ ազատասէր, ինչպէս իրանք հաւատացնում են միամիտներին։ Այլ նրանք ստորաքարշ բաղդախնդիրներ են, որ ճգնում են խաբել ժողովրդին Ազատութիւն դիցուհուն երեւակայական կերպով վաճառքի հանելով, իբրեւ պոռնիկ կնկայ, որպէսզի այդ անամօթ արհեստի վաստակով լիառատ կեանք, պատիւ, անուն, փառք վայելեն իրանք, մեր այդ կեղտոտ պոռնկապահները։



ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Կըսեն՝ աշխատէ և աշխատանքով
Չեռք բեր բոլ փարա, տընով ու տեղով։

Ահա օրն ի բուն մէջ.ք ու բազուկներ
Միշտ աշխատելէ բնաւ չեն դադարեր.
Օտար երկրի մը գործարանի մէջ
Չեմ տեսներ լոյսն արեւի անշէջ,
Գէշ օդն կը խեղդէ, կուրծքըս կը մաշէ,
Դէմքըս անարիւն, ըսես լաւաշ է,
Բայց կերած հացըս ինձ սընունդ չը տար
Եւ ապրուստ մ'ունիմ խեղճ ու կըսկ, թշուառ։

Կըսեն՝ աշխատէ և աշխատանքով
Կունենաս փարա, տընով ու տեղով։

Հանգիստ տեսած չեմ ծընունդէս ի վեր.
Դաշտի աշխատանք, գեղջկական հոգսեր,
Բեռնակրի տանջանք, բըռունց թըրքական,
Թուքն աղաներու միշտ դէմքիս վըրան,
կարծես թէ յատակն անոնց համար չէ,
Իմ պառկած տեղն ալ գոմ է, ախոռ չէ,
Քընատութենէն աչ.քերս են մարած,
Մէջ.քիս ոսկորն ալ բեռներէն ծըռած։

Կըսեն՝ աշխատէ և աշխատանքով
Կունենաս փարա, տընով ու տեղով։

Ալ ատկէ աւել աշխատել կըլլա՞յ,
Բայց եկուր տես, որ, ինչ որ ալ ըլլայ,
Ընտանիք, զաւակ, ամենք նօթի են,
Պատառ հացի մը միշտ կարօտի են.
Զաւակս անժըպիտ, կնիկըս միշտ կուլայ..
Ըստացած վարձըս որի՞ն բաւ ըլլայ,
Փարա կը մընա՞յ, որ մէկդի դընեմ,
Գէթ սեւ օրւան մէջ կտոր մ' հաց գտնեմ։

Կըսեն՝ աշխատէ, խընայող եղիր
Եւ... օրավարձէդ քեզ փարա շինիր։

Բայց անդին տես, որ այն մեծ հարուստը
Աշխատած ունի՞ իմ չափ, այն կուշտը։
Նա՞, որ այնքան շատ դիզած է փարա,
Պալատի պէս տուն, կայք կայքի վըրա,
Այդ հարստութիւն մէկ-մէկ փարայով
Մի՞թէ շիներ է նա աշխատելով,
Թէ մեզ պէս բիւրեր ձեռքին տակ առած՝
Մեր քըտինք դրամի մեծ հանք մ'է ըրած։

Կըսեն՝ աշխատէ, խընայող եղիր,
Մէկ մէկ փարայով տուն-տեղ քեզ շինիր։

Բայց ի՞նչպէս չըսեմ, թէ այն հարուստը,
Միշտ վայելելով փարթամ հանգիստը,
Մեր աշխատանքէն կորզած փարաներ
Իր անգործութեան պայման է դըրեր.
Նորա տուն ու զարդ մեր ձեռքն է շինող,
Նորա արտն, այգի մենք ենք միշտ խնամող,
Նորա ըղձօսնած ճամբայ.ք, քաղաքներ
Մեր աշխատանքի են սուրբ պըտուղներ...

Եւ մեզ դեռ կըսեն՝ աշխատէ կորով,
Հարստութիւն դիզէ... քո օրավարձով։

Մինչդեռ հարուստի փարայով անբաւ
Հազարներ մեզնէ կապրուէին լաւ,
Նա ինքը մենակ՝ կնիկ, զաւակներով,
Փարթամ ու շռայլ կեանք մը վարելով,
Ամեն իրաւունք, փառք իրենն է միշտ,
Իրեն բան մը չէ հարկեր, չունի վիշտ,
Մեր, հազարներիս, մեռքի տակ կիյնայ,
Մեր դառն աշխատանք կուտի, կը քնանայ։

Խընայողութի՜ւն... պատառ հա՜ց չունինք,
Փարա ուսկի՞ց է, որ խնայող լինինք։

Նու փորկուշտները քարոզ կը կարդան՝
Աշխատէ՛, խնայէ—կունենաս փարան...
Աշխարհ ծով կըտրեց մեր քրտինքներէն,
Աշխարհ դրախտ դարձաւ մեր աշխատանքէն—
Մեր քրտանց ծովի մէջ մեզ կը խեղդեն,
Մեր շինած դրախտն ալ կուշտերն կը վայլեն...
Գողե՛ր են ատոնք, թէ՞ խընայողներ...
Գողե՛ր մեր բաղկի, մեր քրտանց գողե՛ր...

Է՛հ, գնա՛, աշխատէ՛, կունենաս փարա,
Որ իրենք ուտեն՝ միշտ անգործ—ահա՛։

Անփարա մարդուն ծաղրել, խընայէ,
Անօթի մարդուն ծաղրել, կեր, խըմէ
Եւ այդ երկուսի դառըն աշխատանք
Իւրացնել, վարել փարթամ, անգործ կեանք—
Ա՛յդ է աշխարհիս մեծերի օրէնք,
Թէեւ քիչւոր, բայց իշխողն ալ իրենք,
Սև կեանքի գընով միլեօնաւորի
Ապրող տըզրուկներ վատթար, գարշելի...

Եթէ օրւան հացն գէթ ունենայինք,
Փարան ի՜նչ—մեր ոյժն կը խընայէինք,
Որ օր մը ձեր դէմ կատղած ելնէինք
Եւ ձեր օրէնքներ քար-քանդ ընէինք...

25 օգոստոսի 1894 ԽԵՆԹԸ.

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ.

ՏՆՍԱՐԱՆ

Հարցաքննիչ դատաւորը բազմած է իր աթոռին վրայ։ Գրագիրը նստած է գետնի վրայ ծալապատիկ, ձեռքին տակ թղթեր։ Հայ յե-

իրան... Անցաւ կարճ ժամանակ։ Լուսնի լոյսն արդէն սկսել էր տեղի տալ արշալոյսին։ Ջինւորները չը համարձակվելով թափանցել տները, իրանց համար ընտրել էին մէկ անառիկ պատսպարան և սպասում էին որսի.—Գափու-Գաեան պաշարվել էր...

***

—Պօղոս,—ձայն տվեց մի պառաւ կին, 25 տարեկան մի երիտասարդի կողեցը խթելով.— Պօղոս, երէկ ասում էիր, թէ էգուց էգուն (առաւօտը կանուխ) արթնացուր ինձ։ Լուսացել է, որդի. կալը պէտ է շեմօնք (երթանք)...

Պօղոսը փռվել էր մի կտոր խսիրի վրայ առանց հանվելու։ Նա քորեց իր կողը, մի քանի անգամ յօրանջեց, ճմռեց աչքերը եւ Աստուծոյ անունը տալով, վեր թռաւ տեղից, առաւ պատից քարշ ընկած մաղը ու հեռացաւ։ Նա մտաւ մարագը, մաղը լցրեց յարդով, դիմեց դէպի ախոռ՝ իր գոմշուկին կեր տալու։ Հազիւ էր նա բաց արեց դուռը, երբ մի գնդակ յանկարծ սուլեց նրա կրծքի տակ, կողում։ Պօղոսը գլխ-թեւաւ ընկաւ գետին և այլ եւս վեր չը կացաւ...

Օէնքի ձայնը զարթեցրեց գիւղացիներին. Նըրանք սարսափահար դուրս նետւեցան իրանց տըներից և քնաթաթախ ցրւեցան մօտակայ անտառների խորքը։ Անընդհատ հրացանաձգութիւնը հալածում էր նրանց։ Մի քանի ժամ վերջ ամբողջ գիւղը մերկացած էր, սուլթանի կանոնաւոր բաշի բօզուկներն ամբողջապէս թալանել էին նրան և խոյս տւել դէպի Չարշամպա-Բին Բաշին իր վրէժը լուծել էր։

***

Գիւղական մի փայտաշէն տնակի դրան առջեւ, մերկ տախտակների վրայ, մէկը միւսի ետեւից կարգով նստոտել էին տղամարդիկներ մի մեծ բազմութիւն։ Նրանք լուռ էին։ Տախտակամածի վրայ փալասի կտորների մէջ պառկել էր մի տղամարդ, հազիւ 27 տարեկան. Նրա ամբողջ զգեստը կարմիր գոյն էր առել, իր կողի պատառվածքից նշմարվում էր արիւնի պաղած փրփուրների տակ մի մեծ բացվածք։ Մարթինի գնդակը փշրել էր կողի ոսկորներն եւ դուրս ցցել։ Տաճկական բռնութիւնն իր ամենավայրագ ոգով պատկերանում էր այդ լուռ սգաւոր բազմութեան աչքին։ Նրանք երբեմն-երբեմն հառաչում, հեկեկում էին եւ զգուշութեամբ սրբում իրանց աչքերի դառն արտասուքը։ Տխրութիւնն այլափոխել էր նրանց դէմքերը. սարսափը եւ բարկութիւնը միախառնվելով, պատկերանում էին նրանց իւրաքանչիւրի վրայ։ Գամված նրանք մնացել էին իրանց տեղերում եւ մինչեւ իսկ մի փոքրիկ շարժում անելու զգուշանում էին։ Նրանք չէին ուզում վրդովել մի չափահասնական քունը, որով քնած էր Պօղոսը մահճի գլխում։ Մինասը նստել էր Պօղոսի գլխի մօտ. նրա աչքերը յառած մնացել էին իր հարազատ եղբօր խոր վէրքի վրայ։ Մերթ ընդ մերթ նրա հայեացքը կանգնում էր բռնութեան անմեղ զոհի գունատ դէմքի վրայ, որի պղտոր արիւնաներկ շրթունքները կարծես աղերսում էին իր հարազատ եղբօր եւ մխիթարում նրան վրէժ առնել։ Մինասը կարծես լսում էր այդ խորհրդաւոր ձայնը գերեզմանի եզերքից եւ սարսռում. նրա ջիղերը լարւում էին, սիրտը կորատւում եւ արագ բաբախում. Մէկ ինչ որ ներքին տագնապ տանջում, խեղդում էր նրան. Նա ուզում էր արտասվել, սակայն ծայրայեղ տրտմութիւնը չորացրել էր նրա աչքերի աղբիւրը. Նրանում արթնացել էր վրէժխնդրութեան ոգին... Եւ այդտեղ, այդ դիակի գլխին նա երդվեցաւ իր եղբօր արիւնով՝ գործադրել իր դիտաւորութիւնը։ Ապա ոտքի ելաւ եւ սկսաւ հեռանալ, տխուր, լեցուն սրտով։ Մէկ երկու անգամ շրջվեցաւ-նայելու իր եղբօր դիակը. երկու աչքեր, լիաբաց ու արիւնացօղ, կարծես հետեւում էին նրան։ Մինասը կանգ առաւ, նա խիստ յուզման մէջ էր։ Արիւնոտած աչքերը անակնթարթ դիտում էին նրան՝ պաղ, մարած ու անշարժ մի նայուածքով։ Մինասի մարմինը ցնցվեց յանկարծ... ապա մի քանի կաթիլ արցունք ծանըր կերպով գլորվեցան նրա այտերի վրայ... Դիակի աչքերը շարունակում էին նրան դիտել... Յանկարծ նա վեր թռաւ, վազեց դէպ ի դիակը, համբուրեց նրա բաց ճակատից եւ իր երկու ափի մէջ սեղմելով իր գլուխը, շրջվեցաւ մէկից եւ անհետացաւ...

***

Անցել էր տասն օր, երբ անձեից բաղկացած ասպատակների մի խումբ ահ ու սարսափ էր ցգել Ջանիկի կառավարչութեան շրջանակում։ Դա Մինասն էր իր ընկերներով.....

ԱԻԲԱՐ—ՌԱՄԻԿ

ՎԵՐՋ.

ՀԱՄԵՂ ՊԱՏԱՌ

ղափոխականը, ձեռքերը շղթայակապ կանգնած է մի կողմ, մի քանի զապթիէների մէջտեղ. այս վերջինները ձեռքերնին ունին սուինաւոր հրացաններ:

Հարց. դատաւոր. —Ըսէ քո անունը, մականունը, ինչով կը պարապիս, որ տեղացի ես:

Հայ յեղափոխականը կըսէ ամէնը և գրագիրը կարձանագրէ:

Հարց. դատաւոր. —Ինչո՞ւ սպաննեցիր ոստիկանութեան պաշտօնեային:

Յեղափոխական. — Ես մարդ մը սպանած չեմ:

Հարց. դատ. —Գեավո՞ւր, ինչպէս թէ սպանած չես. քեզ հետ էր Սիմօն սրիկան ալ:

Յեղափ. — Սիմօնին հետ ես ծանօթութիւն մը չունիմ:

Հարց. դատ. —Շո՞ւն, ինչպէս ծանօթութիւն չունիս. ան ատենը, երբ դուն մտար սպանուածին տունը, Սիմօնն անոր քովի տան մէջ կը կենար:

Յեղափ. —Սպանուածի տունն ալ տեսած չեմ. իսկ Սիմօնն անոր դրացի է եղեր և իր տան մէջ կը քնանայ եղեր սպանութեան ատեն:

Հարց. դատ. — Խընզը՛ր գեավուր, աւանա՛կ, շո՛ւն, դու եկած չես հոս դաս տալու թէ ո՛ր մէկն ուր կը գտնուէր: (Գրագրին) Գրէ, որ յանցաւորն իր յանցանքը կը խոստովանի և Սիմօնին իրեն մեղսակից ըլլալն ալ կը հաստատէ:

Յեղափ. — Ես ատանկ բան չըսի. սպանութեան ատենը ես տունս կը գտնուէի և ձեր գրածը զըպարտութիւն մ' է վրաս...

Հարց. դատ. (կատաղած). — Ի՞նչ... սրիկա՛յ, մարդասպա՛ն, աւազա՛կ, քո պատի՛ւն ալ, քո ընտանի՛քն ալ, քո ա՛զգն ալ... ի՞նչպէս կը համարձակիս ատանկ խօսիլ հետս... Շուտ ասոր ոտքերն ալ շղթայեցէք (զապթիէները կը յարձակին ամբաստանեալի վրան և ոտքերն ալ շըղթայի մէջ կը դնեն... Յեղափ. կը պօռայ, կը դիմադրէ):

Հարց. դատ. (աւելի եւ աւելի կատաղած). — Շուտ, շուտ, ֆէլախկան բերէք հոս. այս շունին ես դաս մը տամ, թէ ինչպէս պէտք է խօսիլ հետս:

Յեղափ. —Ֆէլախկայ ըլլայ, ուրիշ շատ չարչարանք ալ ըլլայ, ես կըսեմ միշտ, որ յանցանք մը գործած չեմ...

Հարց. դատ. (փրփուրը բերանին, ապտակներ կը հասցունէ ամբաստանեալի երեսին). — Աս մէկ, աս երկու, աս ալ երեք, չորս... հինգ... (և մի շարք թիւրքական աղտոտ հայհոյանքներ): Հիմա դու ի հարկէ ալ չես ուրանալ ըրած յանցանքդ և մեր փատիշահին հիքմէթն իր օրէնքները քեզ յարգել կուտայ... խընզը՛ր գեավուր, շա՞ն զաւակ... (Գրագրին) Գրէ, որ աս շունըն իրեն գէշ կը պահէր հարցաքննութեան ատեն, բայց որ իմ հարցերէն շփոթած ամեն բան խոստովանեցաւ...

(Ներս կը բերեն ֆէլական)...

Հարց. դատ. (զապթիէներուն). —Շուտ մը կապեցէք... խընզը՛ր գեավուր, աւանակ, սրիկայ, մարդասպան...

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ

Որպէս զի հասարակական դրութիւնը լինի կատարեալ, պէտք է որ ամենքն ունենա՛ն բաւական և ոչ ոք աւելի:

Ժ.-Ժ. Ռուսսօ.

*

Նորբեք մի թոյլ տաք, որ տէրութեան մէջ գտնվէ մի թշուառ կամ մէկ աղքատ:

Ս. Ժիւստ.

*

Սիրելի ընկերներ, հաւասարութեան մէջ կըռիւ չէ կարող տեղի ունենալ:

Սօլօն.

*

Ներկայումս ապրուստ ձեռք բերելու համար, որ կեանք ունենաս, կորստեան վտանգի մէջ ես դնում հէնց կեանքդ:

X.

*

Ոչխար մի եղիր, որ գայլերը քեզ չուտեն:

(Ռումանական ասացուած)

*

Գամը սպունկով պատի մէջ չի գամվիլ:

(Նոյն)

*

Աղքատի համար մնացած փաղաքշանքը մահն է:

(Նոյն)

*

Բացարձակ ազատութիւն առանց կազմակերպութեան ուրիշ բան չէ, եթէ ոչ աղքատ ու անզէն ընդհանրութիւններին ձգել պաշար ունեցող և զինված զօրքերի ձեռքի տակ:

Վիկտօր Կօնսիդէրան.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Առանձին բրօշիւրով

արտատպված "Ապտակից"

ՇԻՐԻՆ ԱՂԻ

ՀԵՂ.

ԱԽԲԱՐ — ՌԱՄԻԿ

Գինը 5 սանտիմ.

"ՀՆՉԱԿ"

Գլխաւոր օրգան Հնչակեան կուսակցութեան

"ԳԱՂԱՓԱՐ"

Գիտական օրգան Հնչակեան կուսակցութեան

ԱԹԷՆՔ. "ՀՆՉԱԿԻ" ՏՊԱՐԱՆ.